

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-3/24-I/IAPP**

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վահան Ռաշիդի Քոչարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 426 726 514 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

### **3. Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 426 726 514 ՀՀ դրամ:

### **4. Մշտադիտարկում**

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Ակադեմիա**

**Կազմակերպություն**


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների  
ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24  
Հ/հ՝ 900011024115  
ՀՎՀՀ՝ 00005673  
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

ք. Երևան, Հր. Ներսիսյան Փ. 25  
Հ/հ՝ 900018005505  
ՀՎՀՀ՝ 00008791  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն


Նախագահ՝

  
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈՒԲԻ ՍԱՂՅԱՆ



Ծրագրի գիտական ղեկավար՝

  
(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան



Քոչարյան Վահան Ռաշիդի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրողներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Վահան Ռաշիդի Քոչարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-3/24-I/IAPP պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 426 726 514 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Ակադեմիա**

Նախագահ՝




(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ



**Կազմակերպություն**

տնօրեն՝



(ստորագրություն)


Վահան Ռաշիդի Քոչարյան



**ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**  
**«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի**


Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	38
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	10
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	7
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	3
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	2
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	28
Արտոնագրեր՝	1

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Կազմակերպության գիտքարտուղար՝

  
(ստորագրություն)

Խաչատրյան Հրանտ Փրունգիկ



**ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Հ դրամ»

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	387 286 300	77 457 260	96 821 575	96 821 575	116 185 890
2.	տնտեսական ծախսեր՝	11 710 000	2 342 000	2 927 500	2 927 500	3 513 000
3.	այլ ծախսեր՝	27 730 214	5 546 042	6 932 553	6 932 553	8 319 066
Ընդամենը՝		426 726 514	85 345 302	106 681 628	106 681 628	128 017 956

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

Քաջիկ Արտակի Սարգսյան




**ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**

«Ն դրամ»


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	<b>Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝</b>	<b>11 710 000</b>
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	3 500 000
2.	գազի ծառայություն	4 860 000
3.	ջրամատակարարման ծառայություն	820 000
4.	կապի ծառայություն	1 942 000
5.	աղբահանություն	588 000
	<b>Այլ ծախսեր, այդ թվում՝</b>	<b>27 730 214</b>
1.	Գույք	400 000
2.	Սարքեր և սարքավորումներ	6 300 000
3.	Նյութեր	8 270 000
4.	Գործուղումներ	5 000 000
5.	Գիտական միջոցառումների կազմակերպում	2 100 000
6.	Արշավախմբեր	1 500 000
7.	Հրատարակման ծախսեր	580 000
8.	Այլ ծախսեր	3 580 214

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

Քաջիկ Արտակի Սարգսյան





**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

- A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)      D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)  
B - ամիսների քանակ      E - գումարային  
C - աշխատաժամանակի ռեժիմ

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
<b>Վարչասպասարկող անձնակազմ</b>						
Աբգարյան Սվետլանա Վարազդատի	տեխնիկ	48 750	12	հիմնական	20	585 000
Աթանեսյան Արմեն Կիսլանջի	գիտության գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Ահարոնյան Լևոն Համբարձումի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Այդինյան Սամվել Գերասիմի	տարաբանվոր	95 630	12	հիմնական	40	1 147 560
Անտոնյան Աննա Պետրիկի	հաշվապահ	50 000	12	ներքին համատեղություն	8	600 000
Առաքելյան Արմեն Արամայիսի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Առաքելյան Տիգրան Արմենի	տեխնիկ	52 000	12	հիմնական	20	624 000
Ասլանյան Հակոբ Հովսեփի	խառատ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Ավագյան Վյադիմիր Միշայի	ճարտարագետ-էլեկտրամեխանիկ	48 750	12	հիմնական	20	585 000
Ավետիսյան Արփինե Հրանտիկի	ավագ տեխնիկ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Բաղամյան Պարզև Ներսեսի	փականագործ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Բաղդասարյան Դավիթ Էդիկի	ղեկավար	100 000	12	ներքին համատեղություն	8	1 200 000
Բարխուդարյան Գարեգին Ալբերտի	պահնորդ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Բեգոյան Վահրամ Ֆրունզիկի	պարետ	170 000	12	հիմնական	40	2 040 000
Գալյան Ժիրայր Սարգսի	տարաբանվոր	95 630	12	հիմնական	40	1 147 560
Գասպարյան Աշոտ Մովսեսի	ճարտարագետ-տնտեսագետ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Գրիգորյան Սամսոն Կառլենի	պահնորդ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Թովալյան Գրիգոր Օնիկի	ղեկավար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ինանց Մարտիրոս Բորիսի	պահնորդ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խալաֆյան Գագիկ Լենտրոշի	տեխնիկ	48 750	12	հիմնական	20	585 000
Խաչատրյան Արշակ Արամայիսի	ծեփագործ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Խաչատրյան Հրանտ Ֆրունզիկի	գիտքարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Կարապետյան Գայանե Սերժիկի	հաշվետար	130 000	12	հիմնական	40	1 560 000
Կարապետյան Լիլիա Արամի	առաջին մասի տեսուչ	95 630	12	հիմնական	40	1 147 560

Հայրումյան Լուսիկ Վլադիկի	ավագ տեխնիկ	48 750	12	հիմնական	20	585 000
Հաջաթյան Սիրեկան Ֆելիքսի	խառատ	52 000	12	հիմնական	20	624 000
Հարությունյան Անդրեաս Հարությունի	ցանցային ադմինիստրատոր	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հարությունյան Աննա Վլադիմիրի	ավագ տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Հարությունյան Աշոտ Ֆելիքսի	վերելակի սպասարկող	48 750	12	հիմնական	20	585 000
Հարությունյան Լուսինե Ռազմիկի	հավաքարար	122 000	12	հիմնական	40	1 464 000
Հովակիմյան Էդուարդ Մինասի	ղեկավար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Հովակիմյան Ռոզա Գրիգորի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Հովհաննիսյան Աղասի Վուրդյայի	պահնորդ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Ղազարյան Նառա Սամվելի	հավաքարար	130 000	12	հիմնական	40	1 560 000
Ղարիբյան Արամ Գրիգորի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Մաթևոսյան Սմբատ Ալբերտի	ճարտարագետ-տեխնիկ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Մանասյան Յուրի Էդիկի	պահնորդ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Մանասյան Նիկոլայ Էդուարդի	պահնորդ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Մանուկյան Աշոտ Մանուկի	հնոցապան	40 000	12	ներքին համատեղություն	8	480 000
Մանուկյան Աշոտ Մանուկի	պահնորդ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Մանուկյան Գրիգոր Աղասու	պահնորդ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Մարգարյան Գրիգոր Ռաֆիկի	ղեկավար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Մարկոսյան Զեմմա Պատվականի	գրադարանավար	20 000	12	ներքին համատեղություն	8	240 000
Մարտիրոսյան Աշոտ Գեորգիի	մատակարար	170 000	12	հիմնական	40	2 040 000
Մելոյան Էդուարդ Սոկրատի	տարաբանվոր	95 630	12	հիմնական	40	1 147 560
Մինասյան Արտակ Մինասի	տեխնիկ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Միրաքյան Ռադա Շահենի	ֆինանսիստ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Մկրտչյան Լուսիկ Աթաբեկի	ճարտարագետ-սիստեմատեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Մկրտչյան Մարինա Յուրիի	գնումների համակարգող	70 000	12	համատեղություն	8	840 000
Մկրտչյան Տիգրան Մաքսիմի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Մնացականյան Արմինե Ռուբենի	վարիչ	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մովսեսյան Վարդան Վրեժի	ընդհանուր հարցերով փոխտնօրեն	240 000	12	հիմնական	40	2 880 000
Մուրադյան Ռուդիկ Գառնիկի	գագի և ջեռուցման համակարգի սպասարկող	70 000	12	հիմնական	20	840 000
Նորեյան Սերոբ Նադիրի	ղեկավար, գլխավոր էներգետիկ	10 000	12	ներքին համատեղություն	4	120 000
Շահբազյան Սուրեն Խաչիկի	տեխնիկ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Շահբազյան Ստյոպա Երջոյի	պահնորդ	95 630	12	հիմնական	40	1 147 560
Շահինյան Վարդան Արսենի	պահեստապետ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Պապինյան Սյուզաննա Սեյրանի	գործավար	104 000	12	հիմնական	40	1 248 000
	ճարտարագետ-շինարար			հիմնական		

Պետրոսյան Նորայր Սերյոժայի		95 630	12		40	1 147 560
Պետրոսյան Սարգիս Արշակի	տարաբանվոր	95 630	12	հիմնական	40	1 147 560
Սայադյան Վերգինե Աշոտի	հավաքարար	130 000	12	հիմնական	40	1 560 000
Սարգսյան Քաջիկ Արտակի	գլխավոր հաշվապահ	350 000	12	հիմնական	40	4 200 000
Սարիբեկյան Անիկ Ժորայի	հավաքարար	122 000	12	հիմնական	40	1 464 000
Ստեփանյան Անահիտ Հայրապետի	տեխնիկ	48 750	12	հիմնական	20	585 000
Վարդանյան Գագիկ Անդրանիկի	ճարտարագետ-մեխանիկ	52 000	12	հիմնական	20	624 000
Տեխնիկյան Իվետա Գուրգենի	արտոնագրող	48 750	1	հիմնական	20	48 750
Քոչարյան Վահան Ռաշիդի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Ադամյան Նարինե Մեհերի	տեխնիկ	52 000	12	հիմնական	20	624 000
Փանյան Շուշանիկ Սիմակի	ավագ տեխնիկ	52 000	12	հիմնական	20	624 000
Հայրապետյան Վլադիմիր Համոյի	ղեկավար	170 000	12	հիմնական	40	2 040 000
Քոչարյան Սիրանուշ Լևոնի	իրավախորհրդատու	70 000	12	հիմնական	20	840 000
Ղազարյան Վաղինակ Խանախովի	ճարտարագետ-նաղիտեխնիկ	65 000	12	համատեղություն	20	780 000
Ղազարյան Նելլի Սամվելի	հավաքարար	130 000	12	հիմնական	40	1 560 000
Քոչարյան Սերժիկ Սերյոժայի	ճարտարագետ-ագրոնոմ	95 630	12	հիմնական	40	1 147 560
<b>Գիտական անձնակազմ</b>						
<b>Լաբորատորիա 18 ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ և ՏԱՐԱՎԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՅՈՒԹԻ ՀԵՏ</b>						
Նորեյան Սերոբ Նադիրի	ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Թրունի Կարապետ Գրիգորի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Դրմեյան Հենրիկ Ռուբենի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Մեսրոպյան Մեսրոպ Հայրոյի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մովսիսյան Արտուր Եղիշի	Գիտաշխատող	69 050	12	համատեղություն	12	828 600
Մարգարյան Աստղիկ Լորիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Վասիլյան Մարիաննա Ստեփանի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Միրզոյան Ռոբերտ Կարենի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Մովսիսյան Սերյոժա Մուշեղի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Դավաթյան Յուրա Ռոբերտի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Խումբ ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՕՊՏԻԿԱՅԻ ԽՈՒՄԲ</b>						
Աղաբեկյան Վիգեն Նվերի	ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Մամյան Արուսյակ Մարտինի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մարգարյան Հրայր Գրիգորի	Ավագ լաբորանտ	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մկրտչյան Հայկանուշ Ժորժիկի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
<b>Խումբ ԳԵՐՅԱՆՅԵՐՈՒՄ ԴԻՖՐԱԿՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՄԱՆ ԽՈՒՄԲ</b>						
Սողոմոնյան Արկադի Իվանի	ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
	Գիտաշխատող			հիմնական		


Երիցյան Հոմերոս Սուրենի		230 167	12		40	2 762 004
Միրզոյան Վաչագան Ղազարի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Սողոմոնյան Ռուզաննա Երվանդի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
<b>Լաբորատորիա 28 ՄՅՈՍԲԱՈՒԷՐՅԱՆ ՍՊԵԿՏՐԱՍԿՈՊԻԱ ԵՎ ՄՈՂՈՒԼԱՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅՐԵՆԻ</b>						
Հարությունյան Գագիկ Արամի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Բախշիյան Տիրուհի Մաքսիմեյի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մուրադյան Տիգրան Ռաֆայելի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Անտոնյան Աննա Պետիկի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Թոխմախյան Գևորգ Գուրգենի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
<b>Խումբ ՖՈՏՈՆԻԿԱԿԱՆ ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ</b>						
Հարությունյան Սեյրան Հովսեփի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Խաչիկյան Լուսինե Էդուարդի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Սարգսյան Վարդան Էդուարդի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
<b>Լաբորատորիա 38 ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՄԱԿԱԾՈՒՄԸ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ</b>						
Գրիգորյան Լևոն Շավիղի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Խաչատրյան Հրանտ Ֆրունզիկի	Առաջատար գիտաշխատող	83 998	12	ներքին համատեղություն	8	1 007 976
Ավագյան Ռուլանդ Մամիկոնի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Հովհաննիսյան Մարտիկ Արմենակի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Պարագյան Վահրամ Վլադիմիր	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Գրիգորյան Միքե Լևոնի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Քոթանջյան Վարդազար Խորենի	Գիտաշխատող	46 033	12	հիմնական	8	552 396
Արամյան Կարեն Սարգսի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Հովհաննիսյան Արշակ Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	143 921	12	հիմնական	32	1 727 052
Փաշայան Ասատուր Ալեքսանդրի	Կրտսեր գիտաշխատող	35 980	12	հիմնական	8	431 760
Սարգսյան Անուշ Վահագնի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Մնացականյան Արմինե Ռուբենի	Կրտսեր գիտաշխատող	35 980	12	ներքին համատեղություն	8	431 760
Մահտեսյան Ղազարոս Աբրահամի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մարտիրոսյան Ալեքսանդր Վանիկի	Կրտսեր գիտաշխատող	35 980	12	հիմնական	8	431 760
Սարգսյան Աստղիկ Վարդանի	Ավագ լաբորանտ	156 090	6	հիմնական	40	936 540
Մարկոսյան Զեմմա Պատվականի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Մարգարյան Գայանե Վիգենի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Լաբորատորիա 48 ԱԿՈՒՍՏԱՖԻԶԻԿԱ</b>						
Զիլինգարյան Ռուբեն Յուրիի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Մելիքյան Արմեն Հովիկի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
	Գիտաշխատող			հիմնական		

Վարդանյան Ջուլետտա Գերասիմի		230 167	12		40	2 762 004
Պետրոսյան Սարգիս Մազմանի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Չախոյան Սեյրան Հարությունի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
<b>Խումբ ԱԿՈՒՍՏԱՊԼԱՋՄԱՅԻ ԽՈՒՄԲ</b>						
Աբրահամյան Ալեքսան Սենեքերիմի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Հովհաննիսյան Հեկտոր Թորգոմի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սարգսյան Մկրտիչ Հակոբի	Գիտաշխատող	172 625	12	հիմնական	30	2 071 500
Սահակյան Քրիստինե Գրիգորի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
<b>Լաբորատորիա 58 ՊԼԱՋՄԱՅԻ ՖԻԶԻԿԱ</b>						
Արամյան Արթուր Ռազմիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ղալեյան Գեորգի Աշոտի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Հարությունյան Վարդան Գագիկի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սարգսյան Նորիկ Հայրիկի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Մուրադյան Արմեն Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Ալեքսանյան Հովակիմ Արմենակի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Խալախյան Սերգեյ Գավրիլի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Կարապետյան Ռոզա Արսենի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Ամիրադյան Լուսիկ Արթուրի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Դեղոյան Նունե Ալիկի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Մկրտչյան Լուսինե Սամվելի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Կիրակոսյան Սվետա Վրույրի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Լաբորատորիա 68 ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՈՉ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ</b>						
Աթանեսյան Արմեն Կիսլանջի	Ղեկավար	89 950	12	ներքին համատեղություն	8	1 079 400
Սահրադյան Արտակ Իսրայելի	Ավագ գիտաշխատող	60 055	12	համատեղություն	8	720 660
Բեժանովա Լիանա Սուրենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ափրեյան Ռուբեն Ալբերտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սուքիասյան Ռուզան Պողոսի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Դանդյան Աստղիկ Անդրանիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Հակոբյան Ազնիվ Նվերի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մարգարյան Էդվարդ Հրանտի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Տեր-Բալյանց Սարգիս Արամի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Ղարիբյան Նելլի Սամվելի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Խումբ ԱՐԵՎԱՅԻՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՅՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԽՈՒՄԲ</b>						
Ղազարյան Վահրամ Վաչագան	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Պետրոսյան Արամ Մելքումի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868

Տոնոյան Գայանե Սասունի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Պետրոսյան Միլենա Սենիկի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Լաբորատորիա</b> <b>78 ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՌԻ ԳԻԳԱ-ՏԵՐԱՀԵՐՑԱՅԻՆ ՏՈՍՈԳՐԱՖԻԱ և ՍՊԵԿՏՐԱՍԿՈՊԻԱ</b>						
Մարգարյան Վարդան Վլադիմիրի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ղամբարյան Կարեն Մարտինի	Առաջատար գիտաշխատող	83 998	12	համատեղություն	8	1 007 976
Չերպեննիկով Յուրի Միխայիլի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սարգսյան Անահիտ Գեղամի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Շահվերդյան Արուս Վարուժանի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաղդասարյան Դավիթ Էդիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Գրիգորյան Սյուզի Մանվելի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Սամսոնյան Հասմիկ Հայկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Խոսրովյան Սոնյա Գարիկի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Լաբորատորիա</b> <b>88 ՆԱՆՈ ԵՎ ՄԵՂՈ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՖԻԶԻԿԱ</b>						
Սարգսյան Հայկ Արայի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Հարությունյան Վոլոդյա Արտավազի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մամասախիսով Եվգենի Շամիլի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Բաղդասարյան Դավիթ Արթուրի	Գիտաշխատող	57 542	12	հիմնական	10	690 504
Մկրտչյան Մհեր Արթուրի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Խաչատրյան Խաչիկ Սուրենի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Սարգսյան Տիգրան Վրույրի	Ավագ լաբորանտ	78 045	12	հիմնական	20	936 540
Նահապետյան Արամ Արտակի	Ավագ լաբորանտ	78 045	12	հիմնական	20	936 540
<b>Բաժին</b> <b>ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԲԱԺԻՆ (1.«Ռենտգենյան օպտիկա» հայ-ռուսական միջազգային լաբորատորիա, ՌԴ, Տոմսկ, ԱՀ ՏՊՀ, 2. Հայ-ռուսական գիտակրթական և արտադրական միջազգային լաբորատորիա, ՌԴ, Մոսկվա, «Կուրչատովի ինստիտուտ» ԳՀԿ, 3.«Ֆոտոնների և տարրական մասնիկների օպտիկա» գիտակրթական և կիրառական միջազգային համատեղ հայ-ռուսական լաբորատորիա, ՌԴ, Բելգորոդ, ԲՊՀ, 4. Հայ-իտալական գիտակրթական միջազգային լաբորատորիա, Իտալիա, Ֆրասկատի, XLAB)</b>						
Մկրտչյան Արտակ Հենրիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սահարյան Արամ Ազատի	Առաջատար գիտաշխատող	120 000	12	համատեղություն	8	1 440 000
Բաղդյան Վարուժան Էլիբեկի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Նիկողոսյան Վալերի Յուլյակի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Փափազյան Արթուր Հարությունի	Կրտսեր գիտաշխատող	71 960	12	հիմնական	16	863 520
Մկրտչյան Էդգար Արծրունու	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Ավագյան Արկադի Լևոնի	Կրտսեր գիտաշխատող	134 926	12	հիմնական	30	1 619 112
Եղիազիրյան Կարեն Կառլենի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Երանոսյան Արամ Գևորգի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Սրաբյան Խաչատուր Անդրեաս	Ճարտարագետ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Մկրտչյան Արուս Հենրիկի	Ճարտարագետ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Բեգոյան Ռուբեն Վահրամի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284


Խումբ ՍԵՅԱՄԻԿԱՅԻ ԽՈՒՄԲ						
Մխիթարյան Սամվել Աղասու	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Քոթանջյան Խորեն Վարդազարի	Գիտաշխատող	46 033	12	համատեղություն	8	552 396
Հարությունյան Վահան Սերգեի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Խումբ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԽՈՒՄԲ						
Նալբանդյան Վաչե Կրեժի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Խաչվանքիան Դավիթ Կարապետի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Հարթենյան Ջուլիետա Գագիկի	Գիտաշխատող	230 167	5	հիմնական	40	1 150 835
Դովլաթյան Տիգրան Գագիկի	Գիտաշխատող	46 033	12	համատեղություն	8	552 396
Բաբայան Ինգա Արտյուշի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Նալբանդյան Աղավնի Հովհաննեսի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մելիքսեթյան Աշոտ Աշխարաբեկի	Ավագ ճարտարագետ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Խումբ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԻՆԹԵԶԱՆ ԽՈՒՄԲ						
Բարսեղյան Սերյակ Վուրդյա	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Հովհաննիսյան Հրաչյա Մուրտի	Լաբորանտ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Բաժին ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ						
Մկրտչյան Զարա Հենրիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Հունանյան Հովնան Ալբերտի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Հայրապետյան Եղիսաբեթ Հակոբի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ասատրյան Գոհարիկ Գարեգինի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Ազոյան Արամ Օնիկի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Ավետիսյան Կառլեն Վուրդյայի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մուսայելյան Տաթևիկ Ստեփանի	Ճարտարագետ	59 857	12	հիմնական	20	718 284
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						79619
Ընդհանուր գումար՝						387 286 300


Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Վահան Ռաշիդի Քոչարյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝

  
(ստորագրություն)





### ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Կատարել հիմնարար հետազոտություններ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, ցածրջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, նանո և մեզո համակարգերի ֆիզիկայի, ֆիզիկական բժշկության, այլընտրանքային էներգետիկայի և գիտատար սարքաշինության բնագավառներում: Հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարել գիտատեխնիկական մշակումներ և ստեղծել համապատասխան գիտատար սարքերի լաբորատոր նմուշներ, կատարել մշակված ու ստեղծված սարքերի համար շուկայի մշտադիտարկում ու հնարավոր ներդրումային դաշտի ուսումնասիրում, ինչպես նաև պահպանել և ընդլայնել ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը, համալրելով երիտասարդ մասնագետներով:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Արդյունքների հավաստիություն, նորույթ, խնդրի դրվածքի արդիականություն, հրատապություն, կիրառության հնարավորություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, համաշխարհային գիտության մեջ ինստիտուտի կանոնադրությամբ ամրագրված գիտական ուղղություններով իրականացվող հետազոտությունների ոլորտն տեղի ամրապնդում ու ընդլայնում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ընթացիկ ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2021-2025 թթ. ժամանակահատվածում իրականացվող գիտական ծրագրի հերթական փուլը: Նախատեսվում է շարունակել և ընդլայնել ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով՝

- Կարգավորված միջավայրերում արտաքին դաշտերի (ակուստիկ, ջերմային և այլն) առկայության պայմաններում ռենտգենյան, սինքրոտրոնային, գամմա և նեյտրոնային փնջերի դիֆրակտամետրիկ հետազոտությունների իրականացում և այդ փնջերի տարածաժամանակային բնութագրերի ղեկավարման հնարավորության (տեղափոխում, մոնոքրոմատացում, ֆոկուսացում, ապաֆոկուսացում և այլն) հետազոտում:
- Միաբյուրեղներում օրթոգոնալ ակուստիկ ալիքների գրգռման պայմաններում դիֆրակցված ռենտգենյան և սինքրոտրոնային ճառագայթման տարածա-ժամանակային բնութագրերի հետազոտում:
- Անդրադարձած ռենտգենյան և ջերմային նեյտրոնների փնջերի երկչափ ֆոկուսացման նպատակով բյուրեղներում արտաքին ակուստիկ ալիքների և ջերմային գրադիենտի միջոցով ատոմական հարթությունների համապատասխան դեֆորմացիաների ստացման հնարավորության բացահայտում և հետազոտում:
- Կլանման թույլ կոնտրաստ ունեցող (կենսաբանական հյուսվածքներ, օրգանական նյութեր և այլն) կառուցվածքների հետազոտման նպատակով ռենտգենյան տոմոգրաֆիկ պատկերների ստացման նոր եղանակների բացահայտում:



- AOT (Bis(2-ethylhexyl) sulfosuccinate sodium salt) հեպտան+ջուր խառը լուծիչով կենսաբանական թաղանթների մոդելի վրա տոքսիկ և ոչ տոքսիկ նյութերի ազդեցության ուսումնասիրություններ ռենտգենագրաֆիկական, ռեոլոգիական և բնեռային մանրադիտակային մեթոդներով:
- Ռենտգենյան միկրոտոմոգրաֆիայի և տեղային ռենտգենյան սպեկտրասկոպիայի, ինչպես նաև ԳՀց-SՀց ճառագայթման միջոցով տոմոգրաֆիայի իրականացման տեսական հիմունքների և հաշվարկային ալգորիթմների մշակում և հիմնավորում:
- Արտաքին ակուստիկական, էլեկտրամագնիսական ու ջերմային դաշտերի առկայության պայմաններում կարգավորված և ոչ կարգավորված միջավայրերում ռեյատիվիստիկ լիցքավորված մասնիկների կանալացված, պարամետրական, ռենտգենյան անցումային, կոհերենտ արգելակային, օպտիկական ու բնութագրական ճառագայթման երևույթների տեսական ու փորձարարական հետազոտությունների շարունակում:
- Մֆերիկ ու գլանային համաչափությամբ օժտված միջավայրերում տարբեր հետազոտում (ուղղաճիճ, շրջանաձև և պարուրաձև) շարժվող ռեյատիվիստիկ լիցքավորված մասնիկների (մասնիկների փնջերի, փնջերի շղթաների) մակածած էլեկտրամագնիսական դաշտի և ճառագայթման առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ հետազոտություններ՝ նպատակ ունենալով ստացված արդյունքները օգտագործել գիգատերահերցային տիրույթում ճառագայթման նոր (առավել ինտենսիվ և մոնոքրոմատիկ) աղբյուրների մշակման և դրանց կիրառությունների ընդլայնման համար:
- Տարբեր ներքին կառուցվածքներով ալիքատարային համակարգերում շարժվող լիցքավորված մասնիկների (մասնիկների փնջերի, շղթաների) մակածած էլեկտրամագնիսական դաշտի առանձնահատկությունների ուսումնասիրություններ՝ տերահերցային տիրույթում ճառագայթման նոր (առավել ինտենսիվ և ուղղորդված) աղբյուրների մշակման նպատակով:
- Արտաքին դաշտերի առկայության պայմաններում բացասական դիէլեկտրական և/կամ մագնիսական թափանցելիություններով օժտված միջավայրերի հետ տարրական մասնիկների (էլեկտրոն, պոզիտրոն, նեյտրոն), էլեկտրամագնիսական ճառագայթման փոխազդեցության և նոր դասի տարրական մասնիկների օպտիկայի բազային էլեմենտների ստեղծման հնարավորության ուսումնասիրություններ:
- Լիցքավորված մասնիկների կողմից մակերևութային պոլարիտոնների առաքման երևույթի հետազոտում երկու միջավայրերի բաժանման կոր սահմանների վրա:
- Գլանային համաչափությամբ անհամասեռ միջավայրերում Չերենկովյան և սինքրոտրոնային ճառագայթումների առանձնահատկությունների ուսումնասիրում՝ առավել ինտենսիվ և ուղղորդված աղբյուրների մշակման նպատակով:
- Դաշտի տեսության երկչափ ֆերմիոնային մոդելներում կորությամբ և ոչ-տրիվիալ տոպոլոգիայով պայմանավորված երևույթների հետազոտում և դրանց կիրառությունները գրաֆենատիպ նյութերի հատկությունների ուսումնասիրություններում:
- Մինթեզված նոր կոնդենսացված միջավայրերի հետ իոնացնող ճառագայթների ու տարրական մասնիկների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում, մասնավորապես, նման միջավայրերում  $\delta$  էլեկտրոնների ծնման, դրեյֆի, տեղափոխման և բազմապատկման երևույթների հետազոտում:
- Մոշինսկու աստումի մոդելի շրջանակներում տեսականորեն հետազոտվելու են զույգ փոխազդեցությամբ նկարագրվող խոռոչային գազի ջերմադինամիկական հատկությունները քվանտային ոսպնյակում: Նանթիթեղներում դիտարկվելու են թույլ փոխազդող էլեկտրոնային գազի վիճակագրական հատկությունները:
- Նանթիթեղներում հետազոտվելու են կուլոնյան համակարգերի հատկությունները, մասնավորապես, հետազոտվելու են տրիոնային և բիէքսիտոնային վիճակները CdS, CdSe

նանոթիթեղներում, ինչպես նաև օժե պրոցեսները այդ համակարգերում, քննարկվելու են բազմախառնուկային համակարգում էլեկտրոնային վիճակները մագնիսական դաշտի առկայությամբ:

- Քվանտային ոսպնյակում հետազոտվելու են ներգոտիական օպտիկական անցումները ծանր խոռոչների արժեքական գոտում, բրգաձև քվանտային կետում հետազոտվելու են միջգոտիական անցումները էլեկտրական դաշտի առկայությամբ, ադիաբատական մոտավորությամբ զարգացվելու է վերը նշյալ կլանման վերլուծական տեսությունը:
- CYCLON 18 արագացուցիչի պրոտոնային փնջով ճառագայթել 118Տո հարստացված թիրախը և ուսումնասիրել թիրախում տեղի ունեցող (p,n), (p,2n), (p, $\alpha$ ) ռեակցիաները:
- Աճեցված միաբյուրեղների հատկությունների բարելավման և բյուրեղի իրական կառուցվածքի կատարելության աստիճանի լավացման նպատակով ամինաթթուների և մայր լուծույթում նրանց օպտիմալ կոնցենտրացիաների որոշում:
- Կատարել հետազոտություններ մթնոլորտի վրա հարվածող ալիքների ազդեցության բնագավառում, մասնավորապես, այդ ազդեցությունից առաջացած ակուստիկ ալիքների ճառագայթման ուսումնասիրություններ:
- Ակուստաֆիզիկայի տարբեր մեթոդների կիրառմամբ 0.1-20Հց, 20-100Հց ու 100-1000Հց հաճախության արհեստական և բնական աղբյուրներից տարածվող ակուստիկական տատանումների գրանցման հնարավորության ուսումնասիրություններ:
- ՀՀ տարածքում առկա քարանձավերը, բնական և արհեստական ջրային «պարկուճները», կենսաբանական օբյեկտները որպես երկրակեղևում տարածվող սեյսմիկական-ակուստիկական ալիքների գրանցիչներ կիրառելու հնարավորության ուսումնասիրում:
- Ակուստաֆիզիկայի մեթոդների կիրառմամբ կենսաբանական օբյեկտներում նորագոյացությունների հայտնաբերման ու բժշկական այլընտրանքային մեթոդների մշակում:
- Սեյսմա-ակուստիկ ալիքների տարածման ընթացքում ի հայտ եկող մագնիսական երևույթների բացահայտման և դասակարգման նպատակով իրականացվող դաշտային ու լաբորատոր հետազոտություններ:
- Ակուստիկական դաշտերով սառը պլազմայի բնութագրիչների ղեկավարմանը (էներգաներդում, ՕԳԳ և այլն) նվիրված հետազոտություններ:
- Գազապարպումային լազերների բնութագրիչների ուսումնասիրություններ ակուստապլազմային միջավայրի առկայության պայմաններում:
- Պլազմային փնջերի ձևավորման և մթնոլորտային ճնշման պայմաններում նրանց արագացման հնարավորության հետազոտում:
- Արևային էներգիայի վերափոխման համար նոր նյութերի սինթեզում ակուստապլազմային մագնետրոնային փոշենստեցման եղանակով և այդ միացությունների հատկությունների ուսումնասիրություն:
- Ուլտրամանուշակագույն ճառագայթման գերզայուն փոխակերպիչների ստեղծման նպատակով տարբեր հավելումներով կորունդի միաբյուրեղների հատկությունների հետազոտում:
- Ամինաթթուների (գլիցին, ցիտրուլին, պրուլին, վալին, ցիստեին) խառնուկների առկայությամբ ցածր ջերմաստիճանային ջրային լուծույթներից լիթիումի յոդատի հեքսագոնալ մոդիֆիկացիայի միաբյուրեղների աճեցում:
- Նոր ֆոտովոլտային նյութերի ստացման նպատակով հիբրիդային օրգանական-անօրգանական միացությունների սինթեզում:
- Ցածր ջերմաստիճանային ջրային լուծույթներից պրոֆիլային և շերտավոր միաբյուրեղների աճեցում:

- Տարբեր ամինոթթյունների խառնուկների առկայությամբ  $\alpha\text{-LiIO}_3$ -ի միաբյուրեղների աճեցում և ֆիզիկաքիմիական հատկությունների հետազոտում:
- Ամինոթթյունների նոր աղերի ստացում և նույնականացում ինֆրակարմիր սպեկտրասկոպիայի միջոցով: Ստացված բյուրեղների բյուրեղացման պայմանների օպտիմալացում, միաբյուրեղների աճեցում և տարբեր ֆիզիկական հատկությունների ուսումնասիրում:
- Նոր բազմակուպոնենտ միջավայրերի, ռեզիստիվ նյութերի և սեգնետոէլեկտրական ու պլեզոէլեկտրական կերամիկական միացությունների սինթեզում:
- Ապակեկերամիկական տեխնոլոգիայիով  $\text{Ca}(\text{Sr})\text{O-TiO}_2\text{-B}_2\text{O}_3$  նյութական համակարգում նոր օպտիկական ոչգծային նյութերի, ինչպես նաև պինդ ֆազային ռեակցիայի մեթոդով՝ մեծ ունակությամբ և փոքր կորուստներով նյութերի սինթեզում, այդ նյութերի դիէլեկտրական պարամետրերի և օպտիկական ոչ գծային հատկությունների ուսումնասիրում:
- Օպտիկական ժամանակակից ֆունկցիոնալ տարրերի (ֆոտոնիկ բյուրեղներ) մշակման նպատակով միկրոնային և սուբմիկրոնային մոնոդիսպերս մասնիկներից պարբերական կառուցվածքների ստացում և այդպիսի միջավայրերում լույսի տարածման առանձնահատկությունների հետազոտություններ:
- Ակուստաֆիզիկական մեթոդների կիրառմամբ ֆոտովոլտային ու ֆերովոլտային հատկություններով օժտված նոր միջավայրերի սինթեզ:
- Ոչ գծային օպտիկական տարրերի, լուսային մոդուլյատորների, տարբեր տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթման գրանցիչների, իոնիզացնող ճառագայթների ու տարրական մասնիկների գրանցիչ-փոխակերպիչ համակարգերի ֆոտոէլեկտրական համակարգերի մշակում և պատրաստում:
- ԳՀց-ՏՀց ճառագայթման միջոցով համակարգչային տոմոգրաֆիայի իրականացում՝ օգտագործելով ռենտգենյան տոմոգրաֆիայում պատկերների վերականգման մեխանիզմները:
- ՀՀ տարածքում ռազմավարական օբյեկտների հակասեյսմիկական նախնական ահազանգման ու պաշպանության ցանցային համակարգի մշակում և ստեղծում:

Ինստիտուտի կարևոր նպատակներից և խնդիրներից են նաև՝

- Պատրաստել բարձրորակ գիտական կադրեր և ներգրավել նոր հետազոտողների,
- Պարբերաբար իրականացնել աշխատակիցների վերապատրաստում,
- Հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա ստեղծել գիտատար սարքավորումների լաբորատոր նմուշներ,
- ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի միջազգային ճանաչման բարձրացման և կայուն զարգացման նպատակով շարունակել տարբեր միջազգային գիտական միջոցառումների կազմակերպումը՝ Ա.Ռ.Մկրտչյանի անվան «Ակուստաֆիզիկա» միջազգային դպրոց-սեմինարը, համատեղ տեսագիտաժողովներ արտասահմանյան գիտնականների հետ և այլն, ինչպես նաև իրականացնել մրցունակ գիտական ծրագրեր արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական կազմակերպությունների հետ:
- ՀՀ-ում գիտության դերի բարձրացման և հանրայնացման նպատակով տարբեր բնագավառների հետազոտողների, ուսանողների և աշակերտների համար կազմակերպել ինստիտուտում ստացված տարբեր հետազոտական կիրառական արդյունքների ցուցադրություններ և գիտահանրամատչելի սեմինարներ:

Կազմակերպության  
սնօրեն՝



(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(Վահան Քոչարյան)  
(անուն ազգանուն)

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \***

**«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի**


h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	<b>Հիմնարար հետազոտություններ</b>			
1.1	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ	01.01.2024-31.03.2024
1.2	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ	01.04.2024-30.06.2024
1.3	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ	01.07.2024-30.09.2024
1.4	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հետազոտություններ, թվային հաշվարկներ	01.10.2024-31.12.2024
2.	<b>Հետազոտություններ գիտատար սարքաշինության բնագավառում</b>			
2.1	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր	01.01.2024-31.03.2024

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:


		հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	
2.2	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	01.04.2024-30.06.2024
2.3	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	01.07.2024-30.09.2024
2.4	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	01.10.2024-31.12.2024
3	<b>Միջոցառումների կազմակերպում</b>			
3.1	Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում	Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	Նախատեսվող դպրոց-գիտաժողովի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ, նյութերի պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	01.01.2024-31.03.2024
3.2	Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում (International Scientific School--Conference of Acoustic Physics Named after Academician A.R. Mkrtchyan):	Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	Թեզիսների ժողովածուի հրատարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	01.04.2024-30.06.2024

<p>3.3 Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում</p>	<p>Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները</p>	<p>Դպրոց-գիտաժողովի նյութերի հրապարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ</p>	<p>01.07.2024-30.09.2024</p>
<p>3.4 Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում</p>	<p>Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները</p>	<p>Դպրոց-գիտաժողովի նյութերի հրապարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ</p>	<p>01.10.2024-31.12.2024</p>

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն) (Վահան Քոչարյան)  
 (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

  
 (ստորագրություն) (Վահան Քոչարյան)  
 (անուն ազգանուն)

